

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՂԻԱԶԱՐՈՎ ԱՐՏԱՇԵՍ ԱՐՄԵՆԱԿԻ

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Ը. 00.02. - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»  
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝  
ունտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝  
ունտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Վարդան Բաբկենի Բոստանջյան

ունտեսագիտության թեկնածու  
Էլյանորա Նորայրի Մաթևոսյան

Առաջատար  
կազմակերպություն՝  
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան  
ունտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի նոյեմբերի 27-ին ժամը 15<sup>00</sup>-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի Տնտեսագիտության թիվ 015 Մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, քաղ. Երևան, Աբովյան փող. 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թվականի հոկտեմբերի 26-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
սեյնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա.Հ.Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հետազոտության արդիականությունը:** Համաշխարհային տնտեսության գլոբալացումը և ինտեգրումն իր առավելություններին զուգահեռ ուղեկցվում են նաև ազգային տնտեսությունների կախվածությունների խորացմամբ և նրանց միջև տնտեսական կապերի ավելացմամբ, ինչն էլ մեծացնում է անորոշության (ռիսկի) գործոնը ինչպես երկրների, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտների միջև: Արդյունքում ստացվում է, որ բոլորը կախված են բոլորից, ինչի հետևանքով նվազում են սեփական ռեսուրսներով և ուժերով սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման հնարավորությունները:

Տնտեսության մեջ ռիսկերի գնահատումը և դրանց կառավարումը դասվում է այն հիմնախնդիրների շարքին, որոնք, հատկապես անորոշության և արագ փոփոխվող հանգամանքների պայմաններում ձեռք են բերում էական նշանակություն, քանի որ վերջիններիս հետ կապված գործոնների ընթացքը կարող է մեծ ազդեցություն ունենալ երկրի հետագա զարգացման վրա: Ռիսկերի կայունության և դրանց կանխատեսելիության ապահովումը հնարավորություն է տալիս ունենալ հավասարակշռված, արդյունավետ սոցիալ-տնտեսական զարգացում, որն իր հերթին հնարավորություն է ստեղծում ձևավորել ռացիոնալ և արդյունավետ զբաղվածություն, քաղաքացիների բարեկեցության և սոցիալական պաշտպանվածության, ինչպես նաև տնտեսական հավասարակշռված քաղաքականություն:

Ներկայումս ձեռնարկատիրության զարգացումը կարևորվում է ոչ միայն պետական մարմինների և տնտեսավարող սուբյեկտների, այլև հասարակության բոլոր անդամների կողմից այն պատճառով, որ հենց ձեռնարկատիրության զարգացմամբ է հնարավոր հասնել տնտեսության աշխուժացման, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման և երկարատև տնտեսական կայուն աճի, որոնք անշուշտ հասարակության բարեկեցության բարձրացման կարևորագույն նախապայմաններն են և 2008թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքների հաղթահարման մայրուղին: Ուստի ՀՀ իրական հատվածում (ներառյալ՝ շինարարությունում) ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրություններն առավել քան արդիական են և ունեն խիստ կարևոր գիտագործնական նշանակություն:

Թե՛ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող և թե՛ զարգացող երկրներում իրական հատվածների ու առանձին ոլորտների գործունեության վերլուծությունից հետևում է, որ ռիսկերի գնահատման և կառավարման գործընթացները դեռևս գտնվում են կատարելագործման փուլում, մանավանդ որ ռիսկերի կառավարման հիմնական մեթոդներն ու մոտեցումները չկարողացան ապահովել համապատասխան ճկունություն և արդյունավետություն, ինչը դարձավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի (2008թ.-ի) հիմնական պատճառներից մեկը: Այս տեսանկյունից վճռորոշ են

դառնում ինչպես տնտեսության առանձին ոլորտների, այդ թվում՝ շինարարության, որպես ամենառիսկայիններից մեկի, այնպես էլ հիմնական բջիջների՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռիսկայնության գնահատման և կառավարման հիմնահարցերը:

Եթե նկատի ունենանք, որ 2009թ.-ին ՀՀ տնտեսության մեջ նկատվեց աշխարհում տնտեսական աճի անկման ամենաբարձր ցուցանիշներից մեկը (14.1%), որի ավելի քան 80%-ի պատճառը շինարարության ոլորտի ցուցանիշներն էին, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի դերակատարում է ունեցել շինարարությունը ՀՀ-ում մինչև ճգնաժամային ժամանակահատվածում՝ տնտեսական աճի երկնիշ ցուցանիշների ապահովման գործում: Հետագա տարիներին շինարարության ծավալների անկման գործում վճռական է եղել բնակչության միջոցների նվազումը: Այդ ամենով հանդերձ շինարարությունը շարունակում է մնալ ՀՀ տնտեսության առաջատար ոլորտներից մեկը (2014թ.-ին ՀՀ ՀՆԱ-ում շինարարության բաժինը կազմել է շուրջ 10%<sup>1</sup>):

Վերը շարադրվածով է հիմնավորվում ատենախոսության թեմայի ընտրությունը և դրա հրատապությունը:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության տնտեսության շինարարության ոլորտն է, իսկ առարկան՝ այդ ոլորտի և տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման և կառավարման հիմնական մեթոդներն ու մոտեցումներն են, ինչպես նաև ռիսկերի նվազեցման և կառավարման կատարելագործման ուղիները:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Աշխատության հիմնական նպատակն է, հետազոտել շինարարության, որպես իրական հատվածի հիմնական ոլորտներից մեկի (և դրանում գործող առևտրային կազմակերպությունների) ռիսկերի գնահատման և կառավարման միջազգային փորձը, բացահայտել շինարարությունում առաջացող ռիսկերի բնույթը և կանխորոշել դրանց կառավարման գործընթացը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները՝ բացահայտել հանրապետության շինարարության հատվածի ռիսկերի կառավարման հիմնախնդիրները և հիմնավորել վերոնշյալ գործընթացի կատարելագործման անհրաժեշտությունը և ուղիները:

Ատենախոսության ուսումնասիրության նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ու վերլուծել իրական հատվածի և տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի կառավարման արդի միջազգային հիմնախնդիրները,
- հետազոտել <<ռիսկ>> հասկացությունը և բացահայտել դրա տնտեսագիտական բովանդակությունը,

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-մարտին, Տեղեկատվական ամսական զեկույց, Եր., ՀՀ ԱՎԾ, 2015, էջ 11:

- ընդունելի ռիսկի հայեցակարգի շրջանակներում տալ «ռիսկ» հասկացության սահմանումը,
- ներկայացնել առևտրային կազմակերպությունների ռիսկի տեսակները և կառավարման փուլերը,
- ուսումնասիրել հանրապետության շինարարության զարգացման ցուցանիշները և բացահայտել այդ ոլորտի ռիսկերի գնահատման ու կառավարման մեթոդների առանձնահատկությունները,
- վերլուծել ՀՀ շինարարության զարգացման արդյունքներն ու հիմնախնդիրները 2000-2014թթ. ընկած ժամանակահատվածում և ներկայացնել շինարարության ցուցանիշները մակրոտնտեսական զարգացման համակարգում,
- տնտեսաչափական մոդելի օգտագործմամբ գնահատել Հայաստանի Հանրապետության շինարարության ոլորտի ռիսկերը,
- հետազոտել ՀՀ շինարարության ոլորտում ռիսկերի գնահատման մեթոդները և դրանց կառավարման կատարելագործման ուղիներն ու արդյունավետ կառավարման չափանիշները,
- գնահատել ռիսկի վրա հիմնված ստուգումների պրակտիկան Հայաստանի Հանրապետությունում,
- բացահայտել շինարարության թույլտվությունների տրամադրման դյուրինացման բարեփոխումները և դրանց իրագործման հնարավորությունները,
- կոնկրետացնել իրական հատվածի, այդ թվում նաև շինարարության համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացման և ներդրումների գրավչության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում:

**Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել արտասահմանյան և հայրենական հեղինակների հրապարակումները, ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, շինարարական կազմակերպությունների նյութերը: Կատարված հետազոտության համար օրենսդրական հիմքեր են հանդիսացել ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումներն ու մյուս իրականացված ակտերը:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են երևույթների ուսումնասիրության համակարգային մոտեցման և վերլուծության մեթոդները: Կիրառվել են հետազոտությունների տնտեսաչափական, վարկանիշային և փորձագիտական գնահատման, գրաֆիկական, վերլուծության ու համադրման, վիճակագրական տեղեկատվության համեմատական վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

**Հետազոտության գիտական նորույթը:** Ատենախոսությունում հիմնական գիտական արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

➤ հստակեցվել և կոնկրետացվել են շինարարության ոլորտում ռիսկերի գնահատման մոտեցումները՝ նպատակ ունենալով բարձրացնելու ռիսկերի կառավարման արդյունավետությունը և ընտրություն կատարել շինարարության զարգացման նախընտրելի տարբերակների օգտին,

➤ բացահայտվել են Հայաստանի Հանրապետությունում շինարարության ծավալների մեծության վրա ազդող գործոններն ու շինարարության զարգացմանը խոչընդոտող հիմնական վտանգները և առաջարկվել են շինարարության ոլորտում (ներառյալ շինարարության պլանավորման ժամանակ) ռիսկերի կառավարման ձևերի զարգացման հիմնական ուղղություններն ու դրանց կիրառման հիմնական մոտեցումները,

➤ Հայաստանի Հանրապետության շինարարության ոլորտում ռիսկերի գնահատման ու կառավարման առանձնահատկությունների բացահայտման և այդ ուղղությամբ կիրառվող մոտեցումների վերլուծության արդյունքում մշակվել են ոլորտի ռիսկի մակարդակը ձևավորող գործոններն ու ներկայացվել են դրանց նվազեցման և գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները,

➤ գնահատվել է Հայաստանի Հանրապետությունում ռիսկի վրա հիմնված ստուգումների պրակտիկան և մշակվել են առաջարկություններ շինարարության թույլտվությունների տրամադրման դյուրինացման, ինչպես նաև ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացման և ներդրումների գրավչության բարձրացման ուղղությամբ:

**Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:**

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում մշակված տեսական և մեթոդական դրույթները, ինչպես նաև ՀՀ շինարարության ոլորտի և դրանում գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի կառավարման վերլուծության և գնահատման արդյունքները կարող են օգտագործվել տվյալ ոլորտի և շինարարություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների գործունեության կանխատեսելիության բարձրացման, հետևաբար նաև՝ տնտեսության կայուն և հավասարակշռված զարգացման ապահովման համար:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում 2014-2015 թվականներին: Ատենախոսության մեջ ստացված գիտական ու կիրառական արդյունքները հեղինակի կողմից ներկայացվել են «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» (Երևան, ՀՀ ԳԱԱ ՏԻ, 2007թ.), «ՀՀ տնտեսական իրադրությունը և զարգացման հիմնախնդիրները» (Երևան, Եվրասիա միջազգային համալսարան, 2012թ.) և «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները» գիտաժողովներում (Երևան, Եվրասիա միջազգային համալսարան, 2013թ. և 2014թ.): Քննարկվող հիմնախնդիրներին առնչվող թեմայով տպագրվել է տասը գիտական

հողված:

**Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը (առանց հավելվածների) կազմում է 175 էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝** «Ռիսկերի գնահատման և կառավարման արդի հիմնահարցերը» գլխում ուսումնասիրվել է ռիսկի հասկացությունը և տնտեսագիտական բովանդակությունը ինչպես ժամանակակից տնտեսությունում, այնպես էլ դասական մեկնաբանմամբ, ռիսկի սահմանումը՝ ընդունելի ռիսկի հայեցակարգի շրջանակներում, վերլուծվել են առևտրային կազմակերպությունների ռիսկերի տեսակներն ու կառավարման փուլերը:

Ռիսկի և անորոշության կառավարմանն առնչվող առաջին տեսական հետազոտությունները ի հայտ եկան XX դարի սկզբին, իսկ ներդրումային նախագծման հիմքերը դրվեցին ավելի ուշ: Ըստ էության, դա արվեց ականավոր տնտեսագետ Ի.Ֆիշերի կողմից՝ փողի ժամանակային տեսության հիմնարար աշխատությամբ: Ջ.Մ.Քեյնսն իր «Ջբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսությունը» աշխատությունում ևս անդրադարձել է ռիսկի գնահատմանը<sup>2</sup>:

Ուսումնասիրվող թեմայով գիտական շրջանակների հետաքրքրության նոր ալիք բարձրացավ 1952թ.-ին, երբ Գ.Մարկովիցը և Ջ.Դանցիգն առաջարկեցին ներդրումային նախագծերի ընտրության ժամանակ ռիսկի հաշվառման գիտական մեթոդ (փաթեթի տեսություն,  $\beta$  գործակցի համակարգ)<sup>3</sup>: 1960-ական թվականների սկզբին Լ.Ջոնսոնի և Դ.Ստեյնի աշխատանքը լրացրեց փաթեթի տեսությունը՝ ներդնելով հեջավորման գաղափարը<sup>4</sup>: Նույն 1960-ական թվականներին Ու.Շարփի կողմից ձևակերպվեցին ռիսկի հիմնական հասկացությունները, դրա տեսակները, հեջավորման ձևերը, ինչպես նաև առաջարկվեց համապատասխան մոդել, որը ստացավ կապիտալ ակտիվների գնահատման մոդել (Capital Assets Pricing Model-CAPM) անվանումը<sup>5</sup>:

<sup>2</sup> Ջ.Մ.Քեյնս. «Ջբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն», Եր., «Տիգրան Մեծ», 2006թ., էջ 190:

<sup>3</sup> Markowitz H. "Portfolio selection", Journal of finance, Vol. VII, N 1, March 1952, pp. 77-91.

<sup>4</sup> Johnson L. The Theory of Hedging and Speculation in Commodity Futures. Review of Economic Studies 27, 1960, pp.131-59; Stein J. The Simultaneous Determination of Spot and Futures Prices. American Economic Review 51, 1961, pp.1012-1025.

<sup>5</sup> Sharp W. Capital Asset Prices: A Theory of Market Equilibrium Under Conditions of Risk // Journ. Finance. 1964. Sept. pp.. 425-442; Sharpe W. Portfolio Theory and Capital Markets. McGraw-Hill, New York. 1970.

Ձեռնարկատիրական ռիսկը կամ կորպորատիվ ռիսկը (business risk = corporate risk) անվանում են նաև ընդհանուր ռիսկ, որը կարող է առաջանալ գործարարության ընթացքում: Այն ընդգրկում է ռիսկի երկու տեսակ՝ ֆինանսական ռիսկը, որը պարտքով ֆինանսավորման (debt finance) հետևանք է, և ձեռնարկատիրական ռիսկը, որն առևտրային կազմակերպության ամենօրյա գործունեության ժամանակ առաջացող հիմնական ռիսկն է<sup>6</sup>:

Ռիսկը նշանակում է իրավիճակ, երբ իրադարձությունը կարող է տեղի ունենալ կամ որոշակի հավանականությամբ (probability), կամ որոշակի գործոնը (իրադարձությունն) ունի հավանականության բաշխում (probability distribution):

Տնտեսագիտական տեսությունում ռիսկը առավել հաճախ ներկայացվում է մի քանի տարբեր տեսակետներից՝ ռիսկ որպես հնարավորություն, ռիսկ որպես վտանգ և սպառնալիք, և ռիսկ որպես անորոշություն: Սակայն այդ հայեցակարգերը մեկուսացված չեն և իրենցից ներկայացնում են ռիսկի կառավարման ամբողջական տարածությունը կամ կոնտինիումը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի որոշ հոդվածներում ռիսկը նշվում է որպես «<հնարավոր վնասի չափ>», «<ձեռնարկատիրական ռիսկի համար՝ ձեռնարկատիրական գործունեության վնասներ>», մինևույն ժամանակ ռիսկի հասկացությունը ոչ մի տեղ չի բացվում:

Այսպիսով, տնտեսական բարեփոխումների ընթացքում օրենսդիրն ուշադրություն է դարձնում ռիսկի հասկացությանը և ռիսկայնության գաղափարին, ըստ որում, վերջին 4-5 տարիների ընթացքում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռիսկայնության բացահայտմանը, ռիսկի վրա հիմնված ստուգումների իրականացման գաղափարներին զգալի տեղ է տրվում:

Վերլուծելով տարբեր հեղինակների կարծիքները, հեղինակը ներկայացրնել է տնտեսության մեջ ռիսկի հետևյալ գործառույթները՝ նորարարական (խթանող), կարգավորիչ, պաշտպանիչ և վերլուծական: Ռիսկերի առկայությունը ստիպում է այնպիսի որոշումներ ընդունել, որոնց հիմքում ընկած է բոլոր հնարավոր այլընտրանքների վերլուծությունը (աղյուսակ 1):

Հետազոտությունները վկայում են, որ ֆինանսական և տնտեսական ռիսկերի վերլուծության միակ գործնական մոտեցումը մոդելավորումն է: Դրա միջոցով կանխատեսվում են ծախսերի և արդյունքների մոդելի հնարավոր արդյունքները՝ հաշվի առնելով դրանց վրա ազդող փոփոխությունները: Մոդելավորումը հնարավորություն է տալիս վերլուծաբանին համակողմանի և իրատեսական կարծիք ներկայացնել որոշում կայացնողներին: Ծախսերի և արդյունքների ավելի հին պատճառահետևանքային մեթոդի կիրառման դեպքում վերլուծաբանն առաջարկում է մեկ թվով արտահայտված

<sup>6</sup> «Словарь современной экономической теории Макмиллана», под общей редакцией У.Пирса, перевод с английского, М., ИНФРА-М, 2003г., стр. 101.

զուտ բերված արժեք<sup>7</sup>, սակայն վերլուծության այդ արդյունքի հավանականությունը երբեք հայտնի չէր:

## Աղյուսակ 1

### Ռիսկի գործառույթների վերաբերյալ մոտեցումները

Գործառույթը	Վ.Վ.Գրեբենիկ, Ս.Վ.Շկոդինսկի	Վ.Վ.Գլուշչենկո	Ն.Ա.Մեդվեդևա	Ն.Յու.Կրուգլովա
Վերլուծական (այլընտրանքի ընտրության)	+	-	+	+
Կարգավորիչ (ձեռնարկատերերի վրա ներգործող), սոցիալ-տնտեսական	+	+	+	+
Պաշտպանիչ (սնանկացումից խուսափելու ցանկություն)	+	+	+	+
Նորարարական (նոր լուծումներ պահանջող), խթանիչ	+	+	+	+
Պաշտպանիչ (ռիսկի օրենսդրական ամրագրում)	-	+	-	-
Փոխհատուցող (լրացուցիչ շահույթ ստանալու հնարավորություն)	-	+	-	-

Աղբյուրը՝ Попова Т.А. “Определение понятия риска в рамках концепции приемлемого риска”, Научные записки НГУЭУ: [Электронное научное издание], выпуск 4, 2008г.

Շուկայական տնտեսավարման պայմաններում յուրաքանչյուր տնտեսավարող սուբյեկտի գործունեության համար կարելի է առանձնացնել ռիսկի 5 հիմնական բնագավառ.

1. ոչ ռիսկային, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտն իր գործունեության ընթացքում ռիսկի չի դիմում, զերծ է մնում որոշակի կորուստներից և արդյունքում ստանում է միայն հաշվարկային շահույթ, որի մեծությունը սահմանափակ լինել չի կարող:

2. նվազագույն ռիսկ, որի ժամանակ տնտեսավարող սուբյեկտը ռիսկի է դիմում զուտ շահույթի մեծության հետ կապված,

3. բարձր ռիսկային, որի ժամանակ տնտեսավարող սուբյեկտը ռիսկի է դիմում, որպեսզի վատագույն դեպքում կարողանա ծածկել կատարված ծախսերը, իսկ լավագույն դեպքում ստանա հաշվարկային մակարդակից ոչ պակաս շահույթ: Բարձր ռիսկայինի ժամանակ հիմնավոր է արտադրական գործունեության կարգավորումը՝ ի հաշիվ կարճաժամկետ վարկերի,

4. ճգնաժամային ռիսկ, որի ժամանակ տնտեսավարող սուբյեկտը ռիսկի դիմելով կարող է կորցնել ոչ միայն շահույթի ստացումը, այլ նաև չապահովել իրացումից հասույթ, որի դեպքում ողջ ծախսերի փոխհատուցումը կկատարվի նրա հաշվին՝ դրանով իսկ ընկնելով ճգնաժամային վիճակի մեջ,

<sup>7</sup> Չուտ բերված արժեքը բոլոր արդյունքների բերված արժեքն է՝ զեղչված համապատասխան զեղչատոկոսով, հանած բոլոր ծախսերի բերված արժեքը՝ զեղչված նույն դրույքով:

5. անթույլատրելի ռիսկ, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտն իր գործունեության ընթացքում ընկնում է սնանկացման մեջ՝ ֆինանսապես կախված լինելով կրեդիտորներից:

**Ատենախոսության երկրորդ՝ «Շինարարության զարգացման և ռիսկերի գնահատման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»** գլխում վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում շինարարության զարգացման արդյունքները և հիմնախնդիրները, մասնավորապես՝ ներկայացվել է շինարարության դերը տնտեսության մեջ և բնակչության առաջնային պահանջմունքների շարքում, մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում դիտարկվել են շինարարության ցուցանիշները, ներկայացվել են շինարարության զարգացման ընթացքը 2000-2014 թվականներին և Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում շինարարության արտադրանքի իրացման հիմնախնդիրները: Աշխատության այս բաժնում կատարվել է Հայաստանի Հանրապետության շինարարության ոլորտում ռիսկերի գնահատումը:

Արժեքի ստեղծման դասական տնտեսագիտության սկզբունքների համաձայն շինարարությունը պատկանում է տնտեսական գործունեության այն տեսակներին, որոնցում ստեղծվում են իրական բարիքներ: Գյուղատնտեսության և արդյունաբերության հետ միասին շինարարությունը ձևավորում է ցանկացած երկրի տնտեսության իրական հատվածը: Առանց շինարարության գործնականում անհնար է ապահովել ընդլայնված վերարտադրությունը, հատկապես, նոր ռեսուրսների ընդգրկման և տարածքների ավելացման գործում: Կարևոր հանգամանք է նաև այն, որ տնտեսության բազային ճյուղերի (արդյունաբերության և գյուղատնտեսության) համեմատությամբ շինարարությունում ապահովվում է աշխատանքի ավելի բարձր արտադրողականություն, ինչը նշանակում է, որ իրական հատվածի այդ ոլորտում բարձր է ներդրված ռեսուրսների տնտեսական հատույցի մակարդակը, ինչը նշանակալիորեն ավելացնում է ազգային հարստության մեծությունն ավելի արագ տեմպերով, քան տնտեսության մյուս ոլորտներում: Շինարարության միջոցով ստեղծված անշարժ գույքի ցուցանիշները դարձել են երկրի շուկայական տնտեսության և բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևոր ինդիկատորներ:

ՀՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների ինդեքսների ուսումնասիրությունը վկայում է, որ շինարարության ծավալները 2000-2009թթ.-ին նկատելիորեն ավելի արագ են աճել, քան ՀՆԱ-ի ցուցանիշը: 2009թ.-ից սկսված արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի համեմատությամբ շինարարության աճը նկատելիորեն զիջում է նշված ճյուղերին և չի գերազանցում 2008 թվականի մակարդակը: ՀՀ համախառն ավելացված արժեքում շինարարության բաժինն առավելագույնն է եղել 2008թ.-ին՝ կազմելով է 28.6%, ինչը հաջորդ տարիներին շարունակաբար նվազել է՝ 2013թ.-ին կազմելով 12.6% (աղյուսակ 2):

## ՀՀ-ում շինարարության բաժինը եկամուտների ձևավորման գործում, %-ով

Ցուցանիշը	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Համախառն ավելացված արժեքում	11.3	10.7	14.0	17.3	17.0	21.5	25.9	27.3	28.6	20.8	19.5	14.2	14.1	12.6
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունում	16.5	15.7	16.7	19.9	19.0	23.2	26.3	27.7	28.4	20.8	21.1	16.5	15.8	14.4
Արտադրության այլ գուտ հարկերում	3.6	4.0	9.6	8.8	7.2	7.9	7.9	8.1	7.6	4.9	4.9	4.7	4.7	4.9
Համախառն շահույթում և համախառն խառը եկամուտներում	6.9	6.5	12.0	15.4	15.7	20.5	34.5	27.5	29.2	21.3	18.8	13.5	13.1	11.7
այդ թվում՝ հիմնական կապիտալի սպառման մեջ	5.8	6.1	7.4	9.1	9.3	12.0	14.7	14.2	15.3	10.9	9.9	9.3	8.5	6.2
Տնտեսության գուտ շահույթի և գուտ խառը եկամուտների մեջ	7.3	6.8	14.0	17.9	17.9	23.4	29.6	31.4	33.0	24.2	21.4	14.6	14.4	13.4

Աղբյուրը. աղյուսակը հաշարկվել է <<Հայաստանի ազգային հաշիվները>> 2000-ից 2014 թվականների վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

Ուսումնասիրության արդյունքները (աղյուսակ 3) վկայում են, որ մեկ զբաղվածի հաշվով ամենաշատ ավելացած արժեք ՀՀ-ում ստեղծվել է շինարարությունում, քանի որ այն 2010թ.-ին 165,6%-ով բարձր էր տնտեսության միջին ցուցանիշից և 5,5 անգամ մեծ է գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, ձկնորսության ու ձկնաբուծության ճյուղի ցուցանիշից: 2013թ.-ի տվյալներով մեկ զբաղվածի աշխատանքի արտադրողականությունը, 1,4 անգամ ավելի բարձր է եղել, քան արդյունաբերությունում և 3,2 անգամ ավելի, քան գյուղատնտեսությունում: Դա այն դեպքում, երբ 2013թ.-ին 2008թ.-ի համեմատ շինարարությունում աշխատանքի արտադրողականությունը նվազել է 2 անգամ:

### Աղյուսակ 3

#### Աշխատանքի արտադրողականությունը (մեկ միջին զբաղվածի հաշվով արտադրված ավելացված արժեքը (համախառն հիմնական գներով)) ՀՀ տնտեսությունում և նրա հիմնական ոլորտներում 2008-2013 թվականներին, հազ. դրամ

	Տնտեսական գործունեության տեսակները	2008	2009	2010	2011	2012	2013
	Մեկ զբաղվածի հաշվով ՀՆԱ (համախառն, շուկայական գներով)	3192.8	2883.8	2954.5	3215.0	3411.3	3674.3
	Մեկ զբաղվածի հաշվով արտադրանքի հարկերը (հանած սուբսիդիաները)	362.6	305.3	328.3	350.9	390.7	435.2
	Մեկ զբաղվածի հաշվով ավելացված արժեքը (համախառն, հիմնական գներով)	2830.1	2578.6	2626.2	2864.1	3020.5	3239.2
	Մեկ զբաղվածի հաշվով ՖՄԱԶԾ	-49.2	-46.4	-44.8	10.3	-93.0	-106.6
1	Գյուղատնտեսություն	1179.2	1070.1	1332.0	1678.8	1747.3	1989.2
2	Արդյունաբերություն	3717.4	3661.0	4300.2	5033.5	4909.8	5555.2
3	Շինարարություն	14951.0	11806.8	7012.9	7286.1	7206.7	7209.7
4	Առևտուր, նորոգում, կացության և հանրային սննդի կազմակերպում	3649.0	3837.0	3546.4	4065.7	4193.4	4330.3
5	Փոխադրումներ, պահեստային տնտեսություն, տեղեկատվություն և կապ	4696.3	4201.6	3362.5	2195.5	3741.1	3734.6
6	Ֆինանսական, անշարժ գույքի, մասնագիտական գիտատեխնիկական, վարչարարական և օժանդակ գործունեություն	6861.2	7338.4	6716.9	8243.2	11003.0	9480.6
7	Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և բնակչության սոցիալական ապահովում	1556.8	1845.2	1539.5	1653.4	1784.4	2012.8
8	Այլ ծառայություններ	1209.8	1658.1	2055.3	1274.3	1650.9	1727.7

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա հեղինակի կողմից:

Շինարարության ոլորտում ռիսկերի գնահատման նպատակով հեղինակի կողմից հաշվարկվել են շինարարության ոլորտում հնարավոր ռիսկերը՝ «Ռիսկի արժեքային արտահայտության» (ՌԱԱ) մեթոդաբանության հիման վրա: Հաշվի առնելով

շինարարության ոլորտի զարգացման տարբեր սցենարները, տնտեսաչափական մոդելների հիման վրա հաշվարկվել են հնարավոր ազդեցության աստիճանները տվյալ ոլորտի հետագա զարգացման վրա: Տնտեսաչափական մոդելի հաշվարկման ժամանակահատված է ընտրվել 2006-2013թթ.: Հաշվարկման արդյունքները ներկայացված են աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4**

**Մոդելի հաշվարկման արդյունքներ<sup>8</sup>**

Փոփոխական	Գործակից	Ստանդարտ սխալ	t-վիճ	Հավանականություն
Հիմնական միջոցների շահագործում	-0.091597	0.091286	-1.003411	0.3617
Շինմոնտաժային աշխատանքներ	1.040198	0.088482	11.75605	0.0001
Ազատ անդամ	97367.28	31567.57	3.084408	0.0273
R2 = 0.98				

Հաշվարկման արդյունքում ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ միայն շինմոնտաժային աշխատանքներն ունեն նշանակալի ազդեցություն շինարարության ծավալների վրա, մինչդեռ հիմնական միջոցների շահագործման ծավալները նշանակալի ազդեցություն չունեն: Ստացված արդյունքները վկայում են, որ շինմոնտաժային աշխատանքների ծավալի մեկ մլն դրամով ավելացնելու դեպքում շինարարության ծավալներն աճում են 1.04 մլն դրամով:

**Ատենախոսության երրորդ՝ «Ռիսկերի գնահատման և կառավարման բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետության շինարարության ոլորտում»** գլխում ներկայացվել են ատենախոսի մոտեցումները, մշակումները հետևյալ հիմնախնդիրների վերաբերյալ՝

ռիսկի վրա հիմնված ստուգումների պրակտիկայի բարելավումը Հայաստանի Հանրապետությունում,

շինարարության թույլտվությունների տրամադրման դյուրինացման բարեփոխումների և այդպիսի բարեփոխումների հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում,

իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացման և ներդրումների գրավչության բարձրացման ուղիների:

Տնտեսական ռիսկերի առաջացման ուսումնասիրության, ռիսկերի գնահատման և չեզոքացման անհրաժեշտությունն այժմ ընդգծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվող բազմաթիվ փաստաթղթերում: Այսպես, վերջին տարիների համար ընդունված ՀՀ կառավարության գործունեության ծրագրերն

<sup>8</sup> Հաշվարկները կատարվել են հեղինակի կողմից Eviews 8.1 ծրագրային փաթեթի օգտագործմամբ:

անդրադառնում են և՛ մակրոտնտեսական և՛ միկրոտնտեսական ռիսկերի նվազեցման անհրաժեշտությանը:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի միջոցով ստուգում իրականացնող մարմինը ստուգումները պետք է նպատակաուղղի դեպի այն ոլորտները և վերահսկման օբյեկտները, որոնք առավել ռիսկային են: Այդպիսի ստուգումները պլանավորելու նպատակով ստուգում իրականացնող մարմինը մշակում է տվյալ ոլորտում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշները, որոնք պետք է ներառեն տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի ռիսկը և (կամ) տնտեսավարող սուբյեկտի անհատական ռիսկերի հանրագումարը: Ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, իսկ դրանց հաշվարկման և գնահատման կարգը հաստատում է ստուգում իրականացնող պետական մարմինը:

Ըստ ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշների գնահատման՝ տնտեսավարող սուբյեկտները դասակարգվում են հետևյալ երեք խմբերից որևէ մեկում՝ ա) բարձր ռիսկայնության, բ) միջին ռիսկայնության և գ) ցածր ռիսկայնության:

2014 թվականին շինարարության ոլորտում ներդրվեց ռիսկի վրա հիմնված ստուգումների գործընթացը, որի նպատակով ընդունվեց համապատասխան մեթոդաբանությունը և սահմանվեցին ռիսկայնության չափանիշները<sup>9</sup>: Շինարարական օբյեկտների ռիսկայնության դասակարգումն իրականացվում է հետևյալ մեխանիզմով՝ առավելագույն հնարավոր ռիսկային միավորի մինչև 30 տոկոսը ստացած օբյեկտը դասակարգվում է ցածր ռիսկայնության խմբում, 31-ից մինչև 70 տոկոսը ստացած օբյեկտը՝ միջին ռիսկայնության խմբում, իսկ 71-ից մինչև 100 տոկոսը ստացած օբյեկտը ընդգրկվում է բարձր ռիսկայնության խմբում:

Նախկին Խորհրդային Միության երկրներում շինարարության թույլտվությունների տրամադրման գործընթացը բնութագրող ցուցանիշները 2011-2015 թվականներին բերված են աղյուսակ 5-ում:

Վրաստանը ոչ միայն Հարավային Կովկասի տարածաշրջանում, այն նաև նախկին ԽՍՀՄ երկրների շարքում «Շինարարության թույլտվության տրամադրում» ցուցանիշով առաջին տեղն է զբաղեցրել ուսումնասիրվող բոլոր տարիների ընթացքում: Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվությունների տրամադրման հետ կապված գործառնությունները 2015 թվականին 2011 թվականի համեմատ վատացել են: Այսպես, 2011 թվականին Հայաստանը նախկին խորհրդային երկրների շարքում զբաղեցնում էր 5-րդ տեղը (գիջելով Վրաստանին, Էստոնիային, Ղրղզստանին և Բելառուսին), իսկ 2015 թվականին՝ 8-րդ տեղը (Վրաստանին, Էստոնիային, Լիտվային, Ղրղզստանին, Լատվիային, Բելառուսին և Ուկրաինային):

<sup>9</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» N 55-Ն որոշումը, որը հասանելի է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական [www.arlis.am](http://www.arlis.am) կայքում:

Նախկին Խորհրդային Միության երկրներում շինարարության թույլտվությունների տրամադրման գործընթացը  
բնութագրող ցուցանիշները 2011-2015 թվականներին

Երկրները	Գործարարության դյուրինությունը (տեղը բոլոր երկրների շարքում)					Շինարարության թույլտվությունների տրամադրման																			
						տեղը					գործողությունների թիվը					ժամանակը (օր)					արժեքը (%-ով մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ) <sup>1</sup>				
	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015	2011	2012	2013	2014	2015
Հայաստան	48	55	32	37	45	78	57	46	79	81	20	18	17	21	19	137	79	77	84	83	123	57.1	50.1	68.4	1.2
Ադրբեջան	54	66	67	70	80	160	172	177	180	150	31	30	28	28	21	207	212	212	212	151	389	335	292	282	4.1
Բելառուս	68	69	58	63	57	44	44	30	30	51	16	13	12	12	14	151	140	130	128	114	51	41	25	21	0.8
Էստոնիա	17	24	21	22	17	24	89	35	38	20	14	13	13	13	11	134	148	148	148	103	30	279	16.1	15	0.3
Վրաստան	12	16	9	8	15	7	4	3	2	3	10	9	9	9	8	98	74	74	73.5	68.5	23.2	20.2	17.7	14.9	0.3
Ղազախստան	59	47	47	50	77	147	147	155	145	154	34	32	32	29	25	219	189	189	157	156	120	93	103	87	1.5
Ղրղզստան	44	70	70	68	102	43	62	67	66	42	13	12	12	12	10	143	142	142	142	141	154	172	141	129	2.1
Լատվիա	24	21	25	24	23	79	112	113	79	47	24	23	21	18	12	186	205	203	152	149	19	21	19	15	0.3
Լիտվա	23	27	27	17	24	59	47	48	39	15	17	15	15	16	11	162	142	142	105	91	69	25	22	18	0.3
Մոլդովա	90	81	83	78	63	159	164	168	174	175	30	27	26	26	27	292	291	291	291	247	121	79	69	65	0.8
Ռուսաստանի Դաշնություն	123	120	112	92	62	182	178	178	178	156	53	51	42	36	20	540	423	344	297	238	1414	184	129	89	1.9
Տաջիկստան	139	147	141	143	166	178	177	180	184	168	30	26	24	24	24	228	228	228	228	228	996	850	638	604	1.9
Ուկրաինա	145	152	137	112	96	179	180	183	41	70	22	21	20	10	8	374	375	375	73	64	1737	1462	1262	607	10.2
Ուզբեկստան	150	166	154	146	141	145	145	152	159	149	28	25	25	25	23	274	243	243	243	160	68	57	61	50	1.7
<b>Միջինը</b>	<b>71.1</b>	<b>75.8</b>	<b>70.2</b>	<b>66.4</b>	<b>69.1</b>	<b>106.0</b>	<b>112.7</b>	<b>109.6</b>	<b>99.6</b>	<b>91.5</b>	<b>24.4</b>	<b>22.5</b>	<b>21.1</b>	<b>19.9</b>	<b>16.6</b>	<b>224.6</b>	<b>206.5</b>	<b>199.9</b>	<b>166.7</b>	<b>142.4</b>	<b>379.6</b>	<b>262.5</b>	<b>203.2</b>	<b>147.5</b>	<b>2.0</b>

<sup>1</sup> 2015 թվականից սկսած շինարարության թույլտվությունների տրամադրման արժեքը գնահատվում է ոչ թե %-ով մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ, այլ %-ով շինության արժեքի նկատմամբ: Doing Business ժողովածուներում Թուրքմենստանի վերաբերյալ տվյալներ չեն հրատարակվում:  
Աղյուսակը կազմվել է՝ Doing Business 2011, էջ 145-205-ում, Doing Business 2012, էջ 77-138-ում, Doing Business 2013, էջ 145-206-ում, Doing Business 2014, էջ 173-236-ում և Doing Business 2015, էջ 167-230-ում տեղադրված՝ երկրների ամփոփ ցուցանիշների հիման վրա:

**Եզրակացություններ** բաժնում ամփոփված են հետազոտության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությամբ մշակված առաջարկությունները: Դրանցից հիմնականները կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ՝

1. Ռիսկի կառավարմանը վերաբերող առաջին տեսական տնտեսագիտական ուսումնասիրություններն երևան եկան դեռևս XX դարի սկզբին, իսկ ռիսկի քանակական գնահատման և կանխատեսման նկատմամբ հետաքրքրությունները և այդ խնդրի լուծմանն առնչվող առաջին գործնական բնույթի մասնագիտական հետազոտությունները հրապարակում հայտնվեցին 1929թ.-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամին զուգահեռ:

2. Տնտեսագիտության տեսանկյունից (ի տարբերություն, օրինակ, քաղաքականի) գոյություն ունեն ռիսկի մի քանի տեսակներ՝ ներդրումային, ձեռնարկատիրական, կորպորատիվ, ֆինանսական, վարկավորողի, դրամական միավորի արժեզրկման, բարոյական և այլն, որոնք ժամանակին զուգընթաց ունեցել են կիրառման տարբեր ինտենսիվություն և տարածվածություն: Այդ հանգամանքը կապված է եղել ռիսկի, որպես այնպիսի իրավիճակի հետ, երբ իրադարձությունը կարող է տեղի ունենալ կամ որոշակի հավանականությամբ կամ էլ որոշակի գործոնը ունի հավանականության բաշխում, գնահատման և տնտեսական գործունեության ընթացքում դրա կիրառմամբ:

3. Ինչպես ռիսկի բացառումը, այնպես էլ այն նկատի ունենալը և կիրառությունը կախված է որոշումներ կայացնողի գիտելիքներից, հոգեբանական խառնվածքից և որոշումների հավանական արդյունքները (թե՛ օգուտները և թե՛ վնասները) ճիշտ հաշվարկելուց: Նման իրավիճակում վճռական է դառնում տնտեսական երևույթների միջև պատճառահետևանքային կապերի գնահատումը և դրանք հաշվի առնելը, հատկապես տնտեսական գործունեության ռազմավարության մշակման ժամանակ: Իրերի նման վիճակը պահանջում է կազմակերպություններից ուշադրության կենտրոնում պահել և կարևորել ռիսկ-մենեջմենթի արագ կիրառումը կառավարման ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակներում:

4. Ռիսկ հասկացության տարբեր մեկնաբանություններից հետևում է, որ այն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով.

- իրադարձությունները զարգանում են անորոշ ձևով,
- հնարավոր են կորուստներ և բացթողումներ,
- իրավիճակին հնարավոր է որակական և քանակական գնահատական տալ:

Ելնելով այդ հատկանիշներից տնտեսության մեջ ռիսկն ունի 4 գործառույթ՝ նորարարական (խթանող), կարգավորիչ, պաշտպանիչ և այլընտրանքային վերլուծական: Դրանցից հետևում է, որ ռիսկերի կառավարման նպատակը տնտեսական գործունեության հնարավոր ֆինանսական արդյունքների պահպանումն է թույլատրելի (ընդունելի) սահմաններում: Այդ գործընթացում կարևոր է դառնում մոդելավորումը, որը ցույց է տալիս գուտ բերված արժեքի հնարավոր փոփոխման տիրույթները՝ հաշվի առնելով ժամանակի ընթացքում փոփոխվող գործոնները և հանգամանքները:

5. Առևտրային կազմակերպությունների ռիսկը հավանական այն կորուստների մեծությունն է, որը կապված է չստացված եկամուտների լրացուցիչ ծախսերի և այլ տեսակի վնասների առաջացման հետ: Կազմակերպությունների մակարդակում ձեռնարկատիրական ռիսկի հիմնական տեսակներն են՝ արտադրական, առևտրային, ֆինանսական (վարկային), ներդրումային, շուկայական, ապահովագրական և հարկային ռիսկերը: Ասվածից հետևում է, որ տնտեսվարող սուբյեկտների ռիսկերի հաշվառումը, վերլուծությունը և դրանց հետևանքների գնահատումը պետք է

իրականացնել որոշակի և տրամաբանական հաջորդականությամբ՝ սկսելով ռիսկի ներքին և արտաքին գործոնների բացահայտումից, վերջացրած ռիսկի նվազեցման միջոցառումների մշակմամբ:

6. Առևտրային կազմակերպությունների ռիսկի կառավարման փուլերը կարելի է բաժանել երկու խոշոր խմբերի՝ ռիսկի վերլուծություն և ռիսկի նվազեցում ու դրա իջեցման ուղիներ: Առաջին խումբը ընդգրկում է ռիսկի գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումն ու մշակումը, ռիսկի որակական և քանակական բնութագրիչների վերլուծությունը, իսկ երկրորդ խումբը՝ ռիսկի թույլատրելի սահմանային մակարդակի հիմնավորումը և ընտրության չափորոշիչները, ռիսկի նվազեցման մեթոդների ընտրությունը, ռիսկային ներդրումների տարբերակների ձևավորումը, ակնկալվելիք հատույցի (շահույթ, վնաս և այլն) համադրման հիման վրա ռիսկի մեծության գնահատումը: Այս համատեքստում կարևորվում է ռիսկի վերլուծության որակական բնույթի վերլուծության մեթոդների ընտրությունն ու կիրառումը: Տնտեսավարող սուբյեկտների համար առանձնապես մեծ նշանակություն է ձեռք բերում ներդրումային ռիսկի արդյունավետությունը և դրա գնահատումը:

7. Շինարարությունը արժեքի ստեղծման դասական տնտեսագիտության մոտեցումների համաձայն պատկանում է տնտեսական գործունեության այն տեսակներին, որոնցում ստեղծվում են իրական նյութական բարիքներ: Առանց շինարարության գործնականում անհնար է ապահովել ինչպես պարզ, այնպես էլ ընդլայնված վերարտադրությունը: Շինարարության միջոցով է ապահովվում թե՛ արտադրական, թե՛ սոցիալական ենթակառուցվածքների կայուն վիճակը, ինչը մրցունակ տնտեսության ապահովման կարևոր պայմանն է:

ՀՀ-ում 2013թ.-ին տնային տնտեսությունների անդամների համար առավել առաջնային խնդիրների շարքում <<ոչ պարենային առաջնային կարիքներից>> հետո (33.5%), <<բնակարանային հիմնահարցը>> երկրորդն է (20.4%), իսկ երրորդը <<սննդի ապահովման խնդիրն>> է (15.1%): Այսինքն շինարարության դերը բնակարաններով ապահովման գործում հիմնականն է (հատկապես աղքատ ընտանիքների համար), որն ունի կարևոր նշանակություն ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլև ազգային անվտանգության ապահովման և բնակչության արտագաղթը սահմանափակելու տեսանկյունից:

8. Շինարարության ցուցանիշները մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում բնութագրվում են առաջին հերթին ՀՆԱ-ի կառուցվածքում այդ ոլորտի տեսակարար կշռով: Այսպես, 2008թ.-ին ՀՀ ՀՆԱ-ի կազմում շինարարության բաժինը կազմել է 25.3%, որը ծառայությունների ոլորտի ունեցած բաժնից (35.4%) հետո երկրորդ մեծությունն է (համեմատության համար նշենք, որ 2008թ.-ին արդյունաբերության բաժինը կազմել է 13.1, իսկ գյուղատնտեսությանը և անտառտնտեսությանը՝ 16.3%): Այդ ցուցանիշները ԼՂՀ-ում կազմել են համեմատաբար՝ 9.8%, 54.0%, 13.9%, 16.1%:

Սկսած 2008թ.-ից նկատվում է շինարարության ծավալների անընդհատ անկում, ինչի հետևանքով 2014թ.-ին շինարարության արտադրանքի մեծությունը կազմեց 453.4 մլրդ դրամ, որը շուրջ 3 անգամ ավելի փոքր է, քան արդյունաբերական արտադրանքի և շուրջ 2 անգամ՝ գյուղատնտեսական արտադրանքի ծավալներից:

Շինարարության ծավալների այդպիսի անկումը հետևանք էր 2008թ.-ից սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, որի հետևանքով նվազեցին շինարարության ֆինանսավորման աղբյուրները, իսկ 2009թ.-ին ՀՀ-ում արձանագրվեց ՀՆԱ-ի 14.1% անկում (որի 11.6%-ը բաժին էր ընկել շինարարությանը), որն աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկն էր: Բերված տվյալներից հետևում է, որ անցած

Ժամանակահատվածում շինարարությունը ՀՀ տնտեսության համար եղել է ամենառիսկային ոլորտը:

9. ՀՀ-ում, հատկապես 2000-2008թթ.-ին շինարարության ծավալները նկատելիորեն ավելի արագ են աճել, քան ՀՆԱ-ի ցուցանիշը (այդ թվում նաև արդյունաբերական և գյուղատնտեսական), ինչի արդյունքում շինարարությունը դարձավ տվյալ ժամանակահատվածում ՀՀ տնտեսության շարժիչ ուժն ու տնտեսության աճի հիմնական աղբյուրը: Դրա հետևանքով հանրապետության տնտեսության զարգացումը կապվեց մեկ ոլորտի (շինարարության) զարգացման հետ, ինչը ռիսկային էր և մինչև վերջ չկշռադատված: Առավել ևս, որ այն չէր բխում տնտեսության դիվերսիֆիկացման պահանջներից: Թերևս նաև դա էր պատճառը, որ 2013թ.-ին շինարարության ծավալը կազմեց 2008թ.-ի ծավալի կեսը: Հարկ է նաև նշել, որ ՀՀ ավելացված արժեքում շինարարության բաժինը 2008թ.-ին կազմել է 28.6%, վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության միջոցների մեջ՝ 28.4%, համախառն շահույթում և համախառն խառը եկամուտներում՝ 29.2%, այդ թվում՝ հիմնական կապիտալի սպառման մեջ՝ 15.3%, տնտեսության զուտ շահույթի և զուտ խառը եկամուտների մեջ՝ 33.0%: Այսինքն, տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ ավելի շատ ավելացված արժեքի ստեղծումը և մյուս ցուցանիշների աճն այն գրավիչ կողմն էր, որը նպաստեց շինարարության զարգացմանը: Պակաս դեր չի խաղացել նաև ոլորտի բարձր ստվերայնության մակարդակը: Մեծ է նաև շինարարության դերը բնակչության եկամուտների ձևավորման և զբաղվածության ապահովման գործում (2013թ.-ին շինարարությունում զբաղվածների թվաքանակը կազմել է 66.1 հազար մարդ, (տնտեսությունում զբաղվածների 5.7%-ը):

10. Շինարարության ոլորտը ներկայումս նույնպես շարունակում է մնալ ՀՀ տնտեսության լոկոմոտիվներից մեկը, ինչը բացատրվում է ոլորտի բարձր աշխատանքի արտադրողականությամբ (մեկ միջին զբաղվածի հաշվով արտադրված ավելացված արժեքը): Այսպես, 2013թ.-ին շինարարությունում աշխատանքի արտադրողականությունը (մեկ զբաղվածի հաշվով 7209.7 հազար դրամ) տնտեսության միջին ցուցանիշը գերազանցել է 2.2 անգամ, գյուղատնտեսությանը՝ 3.6 անգամ, արդյունաբերությանը՝ 1.3 անգամ: Այսինքն ներդրումներ կատարելու տեսանկյունից գյուղատնտեսության և արդյունաբերության համեմատությամբ շինարարությունը շարունակում է մնալ ՀՀ տնտեսության գրավիչ ոլորտներից մեկը, իսկ իրական հատվածի ճյուղերի շարքում՝ առաջինը:

11. Շինարարության զարգացման ընթացքը բնութագրող հիմնական ցուցանիշների շարքում առաջին հերթին առանձնանում են հիմնական միջոցների գործարկման ծավալները, որոնք 2000-2013թթ.-ին ավելացել են 335.8%-ով: Այդ ցուցանիշն իր զագաթնակետին է հասել 2008թ.-ին՝ գերազանցելով 2000թ.-ի ցուցանիշը շուրջ 7.5 անգամ: 2013թ.-ին 2000թ.-ի համեմատ շինմոնտաժային աշխատանքները ավելացել են 448.4%-ով, սարքավորումների, գործիքների և գույքի արժեքը՝ 736.9%-ով, այլ կապիտալ ծախսերը՝ 274.0%: Այսինքն շինարարության տեխնոլոգիական կառուցվածքն առաջադիմական է: Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի գործարկումը նշված ժամանակահատվածում ամենամեծ մեծություն է ունեցել 2010թ.-ին՝ 520.3 հազ. մ<sup>2</sup>, իսկ 2013թ.-ին՝ 320.2 հազ. մ<sup>2</sup> (համեմատության համար նշենք, որ 2000թ.-ին այն կազմել է 194.0 հազ. մ<sup>2</sup>):

12. Շինարարության ծավալների զագաթնակետին (2008թ.-ին) ոլորտի ֆինանսավորման աղբյուրների շուրջ 70%-ը ապահովվել է բնակչության միջոցների հաշվին: Այդ ցուցանիշը 2009թ.-ին կազմել է 31.9% և շարունակել է նվազել մինչև 2011թ.-

ը կազմելով 15.3% (պետական բյուջեինը՝ 17.2%, կազմակերպությունների միջոցներինը՝ 49.9%, օտարերկրյա ներդրումներինը՝ 13.5%, այլ աղբյուրներինը՝ 4.1%): Սկսած 2012թ.-ից 2011թ.-ի համեմատ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կազմում բնակչության միջոցների բաժինը կազմել է 20.4%, 2013թ.-ին՝ 28.9%, 2014թ.-ին՝ 25.1%: Սկսած 2009թ.-ից և հաջորդող տարիներին ՀՀ-ում շինարարության ֆինանսավորման աղբյուրների կազմում հատկապես նկատելի է օտարերկրյա ներդրումների էական նվազումը: Բավական է նշել, որ այդ ցուցանիշը 2009թ.-ին կազմել է 20.5%, իսկ 2013թ.-ին՝ 8.5%, 2014թ.-ին՝ 8.7%:

13. Շինարարության արտադրանքը շուկայում երևան է գալիս հիմնականում անշարժ գույքի տեսքով: Այդ առումով անշարժ գույքի շուկան այն տեղն է, որտեղ սպառվում է շինարարության արտադրանքը՝ շենքերը, շինությունները, բնակարանները, առանձնատները, ավտոտնակները և բազմաթիվ այլ միջոցները:

2015 թվականի առաջին եռամսյակում ՀՀ-ում գրանցվել է բնակարանների և բնակելի տների առքուվաճառքի 3318 գործարք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4581-ի դիմաց: Առքուվաճառքների գործարքների քանակը նվազել է 1263-ով կամ 27.6%-ով: Այդ թվում՝ Երևանում առքուվաճառքի գործարքների քանակը նվազել է 31.6%-ով:

Մայրաքաղաքում բնակարանների նկատմամբ պահանջարկը կտրուկ նվազել է, սակայն, ըստ պաշտոնական տվյալների (Կադաստրի պետական կոմիտեի կողմից ներկայացվող շուկայական գներին) գները ոչ միայն չեն նվազել, այլ որոշ դեպքերում նաև աճել են:

Երևանում բնակարանների գները դրամային արտահայտությամբ մեկ տարվա ընթացքում գործնականում փոփոխություն չեն կրել: Այսպես, 2015թ.-ի առաջին եռամսյակում մեկ քառակուսի մետրի միջին գինը կազմել է 274 հազ. դրամ, 2014թ.-ի առաջին եռամսյակում՝ 273.4 հազ. դրամ և 273.8 հազ. դրամ 2014թ.-ի չորրորդ եռամսյակում: Դոլարային արտահայտությամբ գները նվազել են 14%-ով:

Մարզերում 2015թ.-ի առաջին եռամսյակում բնակարանների առքուվաճառքի գործարքների թիվը նվազել է 29.6%-ով՝ 2014թ.-ի չորրորդ եռամսյակի համեմատությամբ և 22.8%-ով՝ 2015թ.-ի առաջին եռամսյակի համեմատությամբ: Գների փոփոխության տեսանկյունից մարզերում նույն իրավիճակն է, դրամային արտահայտությամբ գները չեն փոփոխվել, իսկ դոլարային արտահայտությամբ նվազել են:

14. Ռիսկերի կառավարման ընթացքում բացահայտվում, գնահատվում և կառավարվում են դրանք: Շինարարության ոլորտում ռիսկերի գնահատման նպատակով հաշվարկվել են հնարավոր ռիսկերը՝ «Ռիսկի արժեքային արտահայտության» (ՌԱԱ) մեթոդաբանության հիման վրա, ինչպես նաև, հաշվի առնելով շինարարության ոլորտի զարգացման տարբեր սցենարները, տնտեսաչափական մոդելների հիման վրա հաշվարկվել են հնարավոր ազդեցության աստիճանները տվյալ ոլորտի հետագա զարգացման վրա:

Հետազոտության համար ՌԱԱ մեթոդաբանությամբ իրականացված հաշվարկները պատասխանում են հետևյալ հարցին՝ 1 կամ 5 տոկոս հավանականությամբ որքանով կփոփոխվեն շինարարության ոլորտի թողարկման ծավալները: Հաշվարկները ցույց են տալիս, որ դիտարկվող ժամակահատվածում (2006-2013թթ.).

ա) շինմոնտաժային աշխատանքների իրականացման ծավալների հնարավոր անկման մակարդակը կազմել է 39.1%,

բ) 2013 թվականին 5% հավանականությամբ շինմոնտաժային աշխատանքների իրականացման ծավալների անկումը կգերազանցեր 153.05 մլրդ դրամը:

Աշխատանքում օգտագործվել է նաև բազմագործոն տնտեսաչափական մոդելը, որտեղ որպես կախյալ փոփոխականներ հանդես են գալիս շինարարության ծավալները, իսկ որպես անկախ փոփոխականներ՝ շինմոնտաժային աշխատանքների ծավալները և հիմնական միջոցների գործարկման ծավալները:

ՌԱԱ մեթոդաբանությամբ ամենաբարձր արդյունք գրանցած ոլորտը 0-ական ազդեցություն ունի շինարարության ծավալների վրա: Նման արդյունքների պատճառը կարող է պայմանավորված լինել հիմնական միջոցների շահագործման ոլորտում կոռուպցիոն բարձր ռիսկերով և ոլորտի բարձր ստվերայնությամբ:

15. Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դասերը ցույց են տալիս, որ համաշխարհային տնտեսության վատթարացումը չի կարող ազդեցություն չունենալ ցանկացած, հատկապես բաց տնտեսություն ունեցող երկրի տնտեսության վրա: Այս առումով, Հայաստանում ևս արտաքին տնտեսական միջավայրի վատթարացումը կարող է որոշակի ճշգրտումներ մտցնել կառավարության ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսներում և գործընթացներում՝ արդյունքում վտանգելով թիրախային ցուցանիշների հասանելիությունը:

Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպություններում ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը ներդրվեց 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվեց ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը և ստուգումների պլանավորումը, ինչպես նաև ստուգումների իրականացման ժամկետները:

Գործունեության ոլորտի ռիսկը ցուցանիշ է, որը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի կարևորությունն ու վտանգավորությունը՝ ըստ տվյալ գործունեությունից առաջացող հնարավոր բացասական հետևանքների: Եթե տնտեսավարող սուբյեկտը գործունեություն է իրականացնում մի քանի ոլորտներում, ոլորտային ռիսկը հաշվարկվում է ամենառիսկային ոլորտի տվյալներով: Անհատական ռիսկը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները, խախտումների պարբերականությունը, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բնութագրող այլ ցուցանիշներ:

16. 2014 թվականին շինարարության ոլորտում ներդրվեց ռիսկի վրա հիմնված ստուգումների գործընթացը, և այդ նպատակով ընդունվեց համապատասխան մեթոդաբանությունը և սահմանվեցին ռիսկայնության չափանիշները: ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչությունը ՀՀ կառավարության կողմից նախաձեռնած տեսչական բարեփոխումների գործընթացներին ինտեգրելու արդյունքում ներդրվեց ռիսկի վրա հիմնված ստուգումների իրականացման ընթացակարգը:

Վերլուծելով և գնահատելով գնահատվող սուբյեկտներին՝ ըստ նրանց քաղաքաշինական ռիսկի գործոնների, նախատեսվում է ձևավորել տվյալների բազա՝ ստուգման օբյեկտներն ըստ ռիսկայնության դասակարգելու նպատակով, ինչն իր հերթին կրերի քաղաքաշինական պետական տեսչության ռեսուրսների ճիշտ օգտագործմանը և ստուգումների արդյունավետության մակարդակի զգալի բարձրացմանը:

Ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգը իրենից ներկայացնում է շինարարական օբյեկտի ռիսկայնության գնահատումը, տարբերակումը ըստ ռիսկայնության և դրա հիման վրա կառուցված ստուգումների կազմակերպումը:

Շինարարական օբյեկտի ռիսկի գնահատումը կատարվում է ելնելով օբյեկտների տեսակի և շինարարական օբյեկտում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար սահմանված կարգով ներկայացված՝ կառուցապատողի, նախագծող, փորձաքննություն, շինարարական աշխատանքներ, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ռիսկայնության գնահատականի հանրագումարից: Գնահատվող օբյեկտների ոլորտային ռիսկը որոշվում է որպես ցածր, միջին, միջինից բարձր, բարձր և բարձրագույն ռիսկայնության օբյեկտներ:

17. Վերջին 8 տարիների տվյալները վկայում են, որ այդ ժամանակահատվածում աշխարհի 83 երկրներում շինարարությունում իրականացվեց 146 բարեփոխում, որոնց արդյունքում դյուրինացվեց շինարարության թույլտվություններ ստանալու գործընթացը: Ամենաշատ թվով բարեփոխումներն իրականացվել են Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում, որոնց արդյունքում 2005 թվականից սկսած զգալիորեն կրճատվել է թույլտվություններ ստանալու ժամանակահատվածը՝ միջին հաշվով 88 օրով:

Շինարարության թույլտվությունների տրամադրման հետ կապված բարեփոխումների ամենադժվար ուղղությունը կապված է մեկ պատուհանի սկզբունքի (որի դեպքում բոլոր ծառայությունները մատուցվում են մեկ վայրում) ներդրման հետ: Հիմնական դժվարությունները կայանում են նրանում, որ շինարարության հետ կապված փաստաթղթերի համաձայնեցման, դրանց հաստատման գործում ներգրավված են տարբեր պետական մարմիններ, գործակալություններ: Դրանց գործառույթների կրկնությունը բացառելու, փաստաթղթերի դիտարկման և համաձայնեցման ընթացակարգը արդյունավետ կերպով կազմակերպելու համար բազմաթիվ երկրներում կիրառվում է այնպիսի գործելակերպ, երբ տարբեր մարմինների ու գործակալությունների ներկայացուցիչները տեղաբաշխվում և աշխատում են մեկ վայրում: Այդպիսի գործելառճը թույլ է տալիս կազմակերպել ներկայացված փաստաթղթերի դիտարկումը մեկ վայրում՝ առանց բացառելու թույլտվություն տալու համար էական պայմաններից որևէ մեկի քննարկումը կամ նվազեցնելու ստուգման ենթակա տեղեկությունների քանակը, միևնույն ժամանակ հստակ համակարգելով տարբեր մարմինների աշխատանքներն ու գործառույթները: Անցած 8 տարիների ընթացքում նախաձեռնվել է շինարարության թույլտվությունների տրամադրման գործընթացի կարգավորման թվով 18 բարեփոխում, որի հիմնական իմաստը մեկ պատուհանի սկզբունքի ներդրումն է կամ գործելառճի բարելավումը:

Դժվարությամբ ներդրվող, սակայն կարևորագույն բարեփոխման մյուս ուղղությունը շինարարության թույլտվությունների տրամադրումն է՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների արդյունքում: Ոչ բոլոր շինարարական նախագծերն ունեն միևնույն տնտեսական կամ բնապահպանական ազդեցությունը, ուստի և դրանց հետ կապված ռիսկերը չեն կարող միևնույնը լինել: Հաշվի առնելով այս հանգամանքն, իմաստ ունի տարբերակել շինարարության թույլտվությունների տրամադրման գործընթացը՝ ելնելով շինարարության հետ կապված ռիսկերի մակարդակից և շինության տեղաբաշխման վայրից: Այդպիսի գործընթացի ներդրումը թույլ է տալիս և՛ խնայել ձեռնարկատերերի ու իրավասու մարմինների ժամանակը, և՛ արդյունավետ կերպով բաշխել սեփական ջանքերն ու ռեսուրսները: Վերջին 8 տարիների ընթացքում

17 երկրներում նախաձեռնվել է շինարարության թույլտվությունների վերաբերյալ ռիսկի վրա հիմնված որոշումների կայացման բարեփոխում:

18. Հայաստանի Հանրապետության և հարևան երկրների 2011-2015 թվականներին գործարարությամբ զբաղվելու ընդհանուր ցուցանիշների ամփոփումը վկայում է, որ բոլոր ցուցանիշների գծով Վրաստանը համարվել է տարածաշրջանի լավագույն երկիրը, ընդ որում, սեփականության գրանցման հարցում այդ երկիրը 2012-2015 թվականներին առաջին տեղն է զբաղեցրել բոլոր երկրների շարքում: Հայաստանը ուսումնասիրվող բոլոր ցուցանիշների գծով երկրորդն է Հարավային Կովկասի տարածաշրջանում:

Նախկին Խորհրդային Միության երկրների շարքում շինարարության թույլտվությունների տրամադրման բնագավառում վատագույն ցուցանիշը 2011 թվականին ունեին Ռուսաստանի Դաշնությունը (աշխարհում՝ 182-րդ տեղը, իսկ նախկին ԽՍՀՄ երկրների շարքում՝ 14-րդ տեղը), Ուկրաինան (աշխարհում՝ 179-րդ տեղը, իսկ նախկին ԽՍՀՄ երկրների շարքում՝ 13-րդը) և Տաջիկստանը (աշխարհում՝ 178-րդ տեղը, իսկ նախկին ԽՍՀՄ երկրների շարքում՝ 12-րդը): Նշված երկրներից Ուկրաինան 2015 թվականին զգալիորեն բարելավել է իր դիրքերը՝ շինարարության թույլտվությունների տրամադրման ցուցանիշով զբաղեցնելով աշխարհում 70-րդ տեղը, որոշակիորեն բարելավել են իրենց դիրքերը նաև Ռուսաստանի Դաշնությունը (182-րդ տեղից բարձրանալով 156-րդ տեղը) և Տաջիկստանը (178-րդ տեղից տեղափոխվելով 168-րդը): 2015 թվականին նախկին ԽՍՀՄ 14 երկրներից վատագույն ցուցանիշը գրանցվել է Մոլդովայում՝ 175-րդը: Հայաստանը 2015 թվականին այդ ցուցանիշով աշխարհում զբաղեցրել է 81-րդ տեղը (2011թ.-ին՝ 78-րդ տեղը), իսկ նախկին ԽՍՀՄ երկրների շարքում՝ 9-րդ տեղը:

Շինարարության թույլտվությունների տրամադրման գործողությունների թիվը Հայաստանի Հանրապետությունում 2015թ.-ին կազմել է 19, Վրաստանում, Ուկրաինայում՝ 8, Էստոնիայում՝ 11, Դրոգաստանում՝ 10, Լիտվայում՝ 11, Լատվիայում՝ 12, իսկ շինարարության թույլտվությունների տրամադրման ժամկետը 2015թ.-ին ՀՀ-ում կազմել է 83 օր (2011թ.-ին՝ 137 օր), Վրաստանում՝ 73.5 օր, Ադրբեջանում՝ 151 օր:

Շինարարության թույլտվությունների տրամադրման արժեքը (%-ով մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ) Հայաստանում 2011թ.-ին կազմել է 123%, 2014թ.-ին՝ 68.4%, Ադրբեջանում՝ համապատասխանաբար 389% և 282%, Բելառուսում՝ 51% և 21%, Էստոնիայում՝ 30% և 15%: Սկսած 2015 թվականից սկսած շինարարության թույլտվությունների տրամադրման արժեքը գնահատվում է ոչ թե %-ով մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ, այլ %-ով շինության արժեքի նկատմամբ: Եվ այդ ցուցանիշով Հայաստանը նախկին խորհրդային երկրների շարքում զբաղեցնում է 7-րդ տեղը:

19. Իրական հատվածի (այդ թվում՝ շինարարության) համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության հիմնախնդրի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ միջոցառումների իրականացումը՝

- վարկային բյուրոյի համար հարկային պարտավորությունների չկատարման վերաբերյալ տվյալների բազայի հասանելիության վերաբերյալ առաջարկությունների մշակում,
- բարելավել շարժական գույքի գրավը կարգավորող օրենսդրական դաշտը և ստեղծել շարժական գույքի միասնական պետական ռեգիստր,
- ուսումնասիրել բանկերի պահանջով անկախ գնահատողների կողմից գույքի (շարժական և անշարժ) գնահատման մոտեցումների բարելավման հնարավորության խնդիրը,
- խթանել վարկերի խմբային փոխանցում/ վաճառքի հնարավորությունը մի

կազմակերպությունից մյուսին առանց առանձին վարկերի համար պայմանագիր կազմելու,

➤ քննարկել ավանդ չընդունող վարկային կազմակերպությունների կարգավորման և վերահսկողության մոդելը,

➤ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության շրջանակներում «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» գործիքի կիրառման շարունակական ընդլայնում,

➤ ներդնել ՓՄՁ-երի նորամուծական նախաձեռնություններին վարկային երաշխավորությունների տրամադրման, ապահովման ճկուն և արդիական գործիքներ («Տեխնոլոգիաների փոխանցում»),

➤ ուսումնասիրել մասնավոր հատվածի վարկավորմանն ուղղված ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և ընդլայնել ՓՄՁ-ների ներդրումների ոլորտում մասնագիտացված վարկային կազմակերպության միջոցով ռեսուրսների տեղաբաշխումը,

➤ ներկայացնել առաջարկություններ մասնավոր հատվածի վարկավորմանն ուղղված պետական ֆինանսական ռեսուրսների տեղաբաշխումը մրցակցային դարձնելու վերաբերյալ՝ նշելով տեղաբաշխման ենթակա ոլորտները և պայմանները,

➤ լիզինգի և ֆակտորինգի շուկան զարգացնելու և խթանելու նպատակով հարկային օրենսդրության և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բարեփոխումների իրականացումը,

➤ ուսումնասիրել հաջորդող գրավի կիրառելիության արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ իրավական բարեփոխումների հնարավորությունը:

20. Հայաստանը շինարարության ոլորտում, առանձին փորձագետների կարծիքով, ամեն տարի չի ստանում ավելի քան մեկ մլրդ ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ շինարարության թույլտվությունների ձգձգման կամ չտրամադրման պատճառով: Ըստ որում, Երևանի քաղաքապետարանը և ՏԻՄ-երը շինարարություն թույլտվություններ տալու հարցում աշխատում են «սիրողական մակարդակով»: Այսպես, երբ քննարկվում է շինարարության թույլտվությունների տրամադրման հարցը օտարերկրյա ներդրողների հետ շինարարություն իրականացնելու համար, անհասկանալի է մնում, թե ինչպիսի չափանիշներով են ղեկավարվում ծառայողները: Հաճախ, անհասկանալի պատճառներով ներդրողների նկատմամբ դրսևորվում են տարբեր մոտեցումներ շինարարության թույլտվությունների տրամադրման ժամանակ: Իսկ երբեմն էլ միևնույն ներդրողին, շինարարության թույլտվություններ տրամադրելու մասին որոշումները հակասում են միմյանց: Հայաստանում 2000-2007 թվականների շինարարության վերելքը մեծապես պայմանավորված էր նրանով, որ շինարարության ոլորտն ազատված էր որոշ հարկատեսակներից, իսկ ներդրումների ամենամեծ ծավալը բաժին էր ընկնում միջին ներդրողներին (1-ից 10-ը մլն ԱՄՆ դոլարի չափով ներդրումներ իրականացնողներին): 2007 թվականին, այնուհետև 2009 թվականին իրականացված հարկման մեխանիզմների փոփոխության արդյունքում, երբ ներդրողների շահույթը վերահսկվում էր «մանրադիտակի» ներքո, շինարարության ոլորտը, որը միևնույն ժամանակ և՛ սպասարկում էր ՀՀ բանկային համակարգը, և՛ ստեղծում էր բազմաթիվ աշխատատեղեր, անկում ունեցավ: Հայաստանի տնտեսության ներկայիս անբավարար վիճակը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ փոքր և միջին ձեռնարկատերերը գրկվեցին շահույթ ստանալու հնարավորությունից:

Գոյություն ունի հիմնախնդիրների մի ամբողջ տիրույթ, որն առաջին հայացքից չի վերաբերում շինարարությանը: Այդպիսի հիմնախնդիրներից են, օրինակ, ներքին և արտաքին ներդրումները, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից: Ինչ վերաբերում է քննարկվող մեխանիզմներին, ապա պետք է հաշվի առնել, որ

Հայաստանը անդամակցել է Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ), շարունակվում են բանակցությունները նաև Եվրամիության հետ, սակայն մինչ օրս հստակեցված չեն բանկային համակարգին, սոցիալական ոլորտին, ինչպես նաև ապակենտրոնացմանը վերաբերող հայեցակարգային լուծումները: Սակայն ներկայումս Հայաստանի Հանրապետությունը լուրջ խնդիրներ ունի ներդրումների ներգրավման տեսանկյունից (այդ թվում նաև շինարարությունում): Եթե ՀՀ տնտեսությունում, այդ թվում նաև շինարարությունում չձևավորվի տնտեսական ազատական քաղաքականություն և այդ քաղաքականության շրջանակում չիրականացվեն մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանության ու շահույթների ստացման (տնօրինման) հստակ մեխանիզմներ, ապա Հայաստանի տնտեսությունում առաջացած հիմնախնդիրները միայն կավելանան:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ա.Եղիազարով. «Վարկունակության վերլուծության դերը վարկավորման գործընթացում», ՀՀԱ «Լրաբեր» Հատոր 4, Համար 1, Երևան, 2007թ., էջ 7-11:

2. Ա.Եղիազարով. «Փոխառուի վարկունակության գնահատումը», ՀՀ ԳԱԱ ՏԻ «Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Գիտաժողովի նյութեր, Երևան, 2007թ., էջ 56-65:

3. А.Егиазаров. «Модели диагностики банкротства организаций и их применение при оценке кредитоспособности заемщика», ՀՀԱ «Լրաբեր», Հատոր 4, Համար 3, Երևան, 2007թ., էջ 383-387:

4. А.Егиазаров. «Модели диагностики банкротства организаций и повышение на их основе эффективности оценки кредитоспособности заемщика», ՀՀԱ «Լրաբեր», Հատոր 6, Համար 4, Երևան, 2009թ., էջ 504-509:

5. А.Егиазаров. «Модели диагностики и проблемы предсказания банкротства организаций», ՀՀԱ «Լրաբեր», Հատոր 7, Համար 3, Երևան, 2010թ., էջ 425-429:

6. Ա.Մարկոսյան, Ա.Եղիազարով. «ՀՀ տնտեսական իրադրությունը և զարգացման հիմնախնդիրները», Եվրասիա միջազգային համալսարան, «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները», Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2012թ., էջ 9-18:

7. Ա.Եղիազարով. «Իրական հատվածում ձեռնարկատիրական ռիսկերի գնահատման և կառավարման մի քանի հիմնախնդիրներ», Եվրասիա միջազգային համալսարան, «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները», Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2012թ., էջ 65-68:

8. Ա.Եղիազարով. «Ռիսկերի հասկացությունը և տնտեսական բովանդակությունը», Եվրասիա միջազգային համալսարան, «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները», Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013թ., էջ 183-189:

9. Ա.Մարկոսյան, Բ.Ավագյան, Ա.Եղիազարով. «Տարածաշրջանի երկրների տնտեսական համագործակցությունը՝ երկրների ներուժի զարգացման միջոց», Եվրասիա միջազգային համալսարան, «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները», Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013թ., էջ 23-53:

10. Ա.Մարկոսյան, Ա.Եղիազարով. «Հայաստանի Հանրապետությունում շինարարության զարգացման արդի հիմնախնդիրները», Եվրասիա միջազգային համալսարան, «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները», Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2014թ., էջ 66-80:

## **АРТАШЕС АРМЕНАКОВИЧ ЕГИАЗАРОВ**

### **ПРОБЛЕМЫ ОЦЕНКИ РИСКОВ И УПРАВЛЕНИЯ ИМИ В СТРОИТЕЛЬНОМ СЕКТОРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 27 ноября 2015г. в 15<sup>00</sup>, на заседании Специализированного совета 015 ВАК Республики Армения по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х.Абовяна 52.

#### **Р Е З Ю М Е**

Настоящая диссертация посвящена изучению и анализу экономических рисков, возникающих в любой экономике, а также проблемам управления рисками в строительном секторе экономики РА. Управление рисками, а также предсказуемость их возникновения позволяет обеспечивать уравновешанное и эффективное социально-экономическое развитие страны. А такое развитие, в свою очередь, позволяет создавать условия для рациональной занятости, а также обеспечить благосостояние и социальную защищенность населения. Все перечисленные условия необходимы для реализации взвешенной экономической политики.

Объектом исследования является строительный сектор экономики РА, а предметом исследования - основные методы и подходы оценки рисков хозяйствующих субъектов, действующих в отрасли строительства и управления рисками, а также пути уменьшения рисков и совершенствования методов управления ими.

Основная цель исследования, изучив международный опыт оценки и управления рисками в реальном секторе экономики (и в частности - в строительстве), выявить сущность рисков, возникающих в строительном секторе, предопределить процесс управления ими, а также предложить пути совершенствования управления рисками в строительном секторе Республики Армения.

Для обеспечения возможности решения поставленной цели в диссертационной работе поставлены следующие задачи:

- исследовать современные проблемы в деле управления рисками, возникающими в реальном секторе экономики и у хозяйствующих субъектов,
- исследовать понятия “рисков” и их экономическую сущность,
- предложить определение риска в рамках концепции приемлемого риска,
- представить виды рисков коммерческих организаций и этапы управления ими,
- исследовать показатели развития строительного сектора республики и выявить особенности оценки рисков и методов управления ими,
- проанализировать результаты развития строительного сектора РА за 2000-2014 годы и представить их в целостной структуре макроэкономических показателей,
- с использованием эконометрической модели определить риски, присущие сектору строительства Республики Армения,
- изучить методы оценки рисков в строительном секторе РА, пути совершенствования управления, а также показатели эффективности управления,

- оценить практику проведения проверок с учетом рисков в строительном секторе экономики РА,
- выявить основные направления реформ в деле совершенствования выдачи разрешений на строительство, а также возможности их применения в РА,
- систематизировать пути увеличения доступности финансовых ресурсов для реального сектора экономики (в том числе строительства) и повышения привлекательности инвестиций в экономику РА.

Основные научные результаты исследования имеют теоретическое и практическое значение, научная новизна которых заключается в следующем:

- определены и систематизированы подходы к оценке рисков в отрасли строительства с целью повышения эффективности управления рисками и выбора оптимальных вариантов развития строительного сектора,
- выявлены факторы, влияющие на объемы строительства и препятствующие развитию сектора строительства в Республике Армения, с учетом которых представлены основные направления развития управления рисками в строительстве (включая стадию планирования) и подходы к применению методов управления рисками,
- на основе анализа рисков, возникающих в строительном секторе Республики Армения, и выявления особенностей в деле управления ими, разработана система факторов, предопределяющих риски и представлены основные мероприятия по уменьшению факторов риска и разрешению проблем, стоящих перед данной отраслью экономики,
- проведена оценка практики применения проверок, основанных на рисковости хозяйствующих субъектов, разработаны предложения по упрощению выдачи разрешительных документов в строительстве, а также по увеличению привлекательности инвестиций и привлечению финансовых ресурсов в данный сектор экономики.

**ARTASHES ARMENAK YEGHIAZAROV**

**PROBLEMS OF RISK ASSESSMENT AND MANAGEMENT  
IN THE CONSTRUCTION SECTOR OF THE REPUBLIC OF ARMENIA**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of PhD of economic sciences in the field 08.00.02 “Economics, Management of the Economy and its Branches”

The defense of the dissertation will take place at 15<sup>00</sup>, on November 27, 2015, at the Meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.  
Address: 52 Abovyan str., Yerevan, 0009, Armenia

**S U M M A R Y**

The dissertation is devoted to the study and analysis of economic risks arising in any economy, as well as problems of risk management in the construction sector of the economy of Republic of Armenia. Risk management, as well as the predictability of their occurrence allows ensure a balanced and effective socio-economic development of the country. And this development, in turn, allows to create the conditions for rational employment, and to ensure the welfare and social security of the population. All these conditions are necessary for the implementation of sound economic policies.

The object of this study is the construction sector of the economy of Armenia, and the subject of research - basic methods and approaches for risk assessment of economic entities operating in the construction sector, risk management, as well as ways to reduce the risks and improve the methods of risk management.

The main objective of dissertation, examining the international experience of risk assessment and management in the real sector of the economy (in particular - in construction sector), to reveal the essence of the risks arising in the construction sector, predetermine risk management tools, and suggest ways for risk management improvement in the construction sector of the Republic of Armenia.

To be able to solve the purpose in the research the following tasks are taking into consideration:

- to explore contemporary issues in the management of risks arising in the real economy and economic entities,
- to explore the concept of "risk" and their economic substance,
- to propose a definition of risk within the concept of acceptable risk,
- to present types of risks of commercial organizations and the steps of management,
- to examine the performance of the construction sector of the country and to identify the particularities of risk assessment and risk management techniques,
- to analyze the results of the development of the construction sector in Armenia during 2000-2014 years, and to present them in a coherent structure of macroeconomic indicators,
- using an econometric model to determine the risks inherent in the construction sector of the Republic of Armenia,

- to explore methods of risk assessment in the construction sector of Armenia, ways of improvement the governance and management indicators,
- to evaluate the practice of risk-based audits in the construction sector of the economy of Armenia,
- to identify the main directions of reform for the improvement of building permits, as well as the possibility of their using in the RA,
- to organize ways of increasing the availability of financial resources for the real sector (including construction) and to increase the attractiveness of investment in the Armenian economy.

Main scientific results of the study have theoretical and practical significance, scientific novelty of which is as follows:

Defined and systemized approaches of evaluation of risks in the construction industry, which focused on improvement of risk management effectiveness and on finding an optimal development of the construction sector.

Discovered the factors affecting on volume of construction and hindering the development of the construction sector in the Republic of Armenia, taking into account that the main directions of development of risk management in the construction (including the planning stage) and approaches to the use of risk management techniques.

Based on an analysis of risks arising in the construction sector of the Republic of Armenia, and identify features in the management, developed a system of factors determining the risks and presents the main measures to reduce risk factors and address the problems faced by this sector of the economy,

Estimated the practice of examination based on the riskiness of business entities, developed proposals to simplify the issuance of permits in the construction, as well as to increase the attractiveness of investment and attraction of financial resources in this sector.